NATO
OTAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
այցելե՛ք մեր կայքը՝
www.nato.int

Հայտնաբերե՛ք ՆԱՏՕ-ն

Մարդկանց պաշտպանությունը

Մենք այնքան ենք վարժվել ազատ ու անհոգ ապրելուն ու տեղաշարժվելուն՝ ապահով ու տնտեսապես անվտանգ միջավայրում, որ հաճախ չենք էլ մտածում, թե որքան կարևոր է դա բոլորիս համար: Առօրյա կյանքի բոլոր ոլորտների անվտանգությունը մեր բարեկեցության հիմնաքարն է:

Գործընկերությունների կռումը

Երկխոսության ու համագործակցության ծավալումը կենսական նշանակություն ունի խաղաղ գոյակցության ու տարբեր երկրների միջև ավելի խորը փոխըմբռնում հաստատելու համար: ՆԱՏՕ-ն իր անդամ ու գործընկեր երկրներին անվտանգության խնդիրները համատեղ քննարկելու բացառիկ հնարավորություն է ընձեռում՝ փոխադարձ վստահության ստեղծման և, հեռանկարում, հակամարտությունները կանխելու նպատակով: Գործնական համագործակցության ու բազմակողմ նախաձեռնությունների միջոցով, երկրներն այժմ միասին են դիմակայում անվտանգության գծով ծագող նոր սպառնալիքներին:

Պայքար նոր սպառնալիքների դեմ

Սպառնալիքների բնույթի փոփոխության հետ, պետք է փոխվեն նաև խաղաղության պահպանման հեռանկարները: ՆԱՏՕ-ն վերակողմնորոշում է իր պաշտպանական կարողությունները՝ հաշվի առնելով արդի սպառնալիքները: Այն արդի պահանջներին է հարմարեցնում իր ուժերն ու տարբեր երկրների ներգրավում ահաբեկչության, պետական ճգնաժամերի և անվտանգությանը սպառնացող այլ գործոնների, օրինակ՝ զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարելու գործում:

Խաղաղության ու կայունության հաստատում

Կայունությունից միաժամանակ կարող են օգուտ քաղել բազմաթիվ երկրներ: Խիստ կարևոր է կայունություն հաստատել այն տարածաշրջաններում, որտեղ լարվածությունը սպառնում է անվտանգությանը: Ահա թե ինչու է ՆԱՏՕ-ն գործուն դեր ստանձնում ճգնաժամերի հաղթահարման գործողություններում՝ այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ:

Անդամ ու գործընկեր երկրները

Հյուսիսատլանտյան պայմանագրի մտորագրումը՝ 1949-ի ապրիլի 4-ին

ԱՆԴԱՄՆԵՐԸ (ԵՎ ԱՆԴԱՄԱԳՐՄԱՆ ՏԱՐԻՆ)

Ալբանիա /2009
Բելգիա /1949
Բուլղարիա /2004
Կանադա /1949
Խորվաթիա /2009
Չեխիայի Հանրապետություն /1999
Դանիա /1949
Էստոնիա /2004
Ֆրանսիա /1949
Գերմանիա /1955
Հունաստան /1952
Հունգարիա /1999
Իսլանդիա /1949
Իտալիա /1949
Լատվիա /2004
Լիտվա /2004
Լյուքսեմբուրգ /1949
Նիդեռլանդներ /1949
Նորվեգիա /1949
Լեհաստան /1999
Պորտուգալիա /1949
Ռումինիա /2004
Սլովակիա /2004
Սլովենիա /2004
Իսպանիա /1982
Թուրքիա /1952
Մեծ Բրիտանիա /1949
Միացյալ Նահանգներ /1949

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ (ԳՀԽ) ԵՐԿՐԿՆԵՐ

Հայաստան
Ավստրիա
Ադրբեջան
Բելառուս
Բոսնիա և Հերցեգովինա
Ֆինլանդիա
Վրաստան
Իռլանդիա
Ղազախստան
Ղրղզստանի Հանրապետություն
Մալթա
Մոլդովա
Մոնտենեգրո
Ռուսաստան
Սերբիա
Շվեդիա
Շվեյցարիա
Տաջիկիստան
Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն*
Թուրքմենստան
Ուկրաինա
Ուզբեկստան

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ալժիր
Եգիպտոս
Իսրայել
Հորդանան
Մավրիտանիա
Մարոկկո
Թունիս

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ (ՍՀՆ) ԵՐԿՐՆԵՐ

Բահրեյն
Քուվեյթ
Կատար
Արաբական Միացյալ Էմիրություններ

*Թուրքիան Մակեդոնիայի Հանրապետությունը ճանաչում է վերջինիս սահմանադրական անվանմամբ:

Ի՞նչ է ՆԱՏՕ-ն

Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունն աշխարհի խոշորագույն միջազգային կառույցներից է: Այն քաղաքական ու ռազմական դաշինք է, որը միավորում է Հյուսիսային Ամերիկայի ու Եվրոպայի 28 անդամ-երկիր:

Այդ երկրները հանդիպումներ են ունենում՝ անվտանգության ու պաշտպանության ոլորտում համագործակցելու նպատակով: Այդ տեսանկյունից, ՆԱՏՕ-ն նշված երկու մայրցամաքներին տրամադրում է քաղաքականության ու պաշտպանության ասպարեզում համագործակցության եզակի հնարավորություն:

Ի՞նչ է անում ՆԱՏՕ-ն

ՆԱՏՕ-ի առաքելությունն իր անդամներին պաշտպանելն է՝ քաղաքական ու ռազմական միջոցներով: Այն նաև խրախուսում է խորհրդակցություններն ու համագործակցությունը ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող երկրների հետ՝ անվտանգությանն առնչվող բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ պաշտպանության համակարգի բարեփոխումների ու խաղաղության պահպանման:

Խորհրդակցությունների ու համագործակցության շնորհիվ, ՆԱՏՕ-ն նպաստում է հակամարտությունների կանխմանը՝ ինչպես իր անդամ-երկրների սահմաններում, այնպես էլ դրանցից դուրս:

Այն ողջ աշխարհում տարածում է ժողովրդավարական արժեքները և ի գործ դնում բոլոր հնարավոր միջոցները հակամարտությունների խաղաղ կարգավորման համար: Երբ դիվանագիտական միջոցներն արդյունք չեն տալիս, ՆԱՏՕ-ն ունի սեփական ուժերով, կամ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ, ճգնաժամերը կառավարելու և խաղաղարար միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ ռազմական հնարավորությունները:

ՆԱՏՕ-ն ունի նաև գործունեության երկրորդ ասպարեզ, այն է՝ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորում, Դաշնակիցներին և Գործընկերներին աղետների հաղթահարման գործում օժանդակության ցուցաբերում, ինչպես նաև գիտության ու շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության ընդլայնում:

Ինչպե՞ս է գործում ՆԱՏՕ-ն

Յուրաքանչյուր անդամ-երկիր մշտական պատվիրակություն ունի Բրյուսելում գտնվող ՆԱՏՕ-ի քաղաքական կենտրոնում: Պատվիրակությունը գլխավորում է դեսպանը, որն իր պետության տեսակետն է ներկայացնում Դաշինքի խորհրդակցական ու որոշումների կայացման գործընթացում:

Հյուսիսատլանտյան խորհուրդը կազմակերպության որոշում կայացնող ամենագլխավոր մարմինն է: Այն հանդիպումներ է ունենում տարբեր մակարդակներով՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի նախագահությամբ, որն օգնում է անդամներին համաձայնության գալ առանցքային հարցերի վերաբերյալ: ՆԱՏՕ-ի բոլոր հանձնաժողովներում որոշումները կայացվում են միայն կողմերի ընդհանուր համաձայնությամբ: Ուստի, յուրաքանչյուր «ՆԱՏՕ-ի որոշում» իրենից ներկայացնում է բոլոր անդամ-երկրների միասնական կամքի դրսևորումը:

ՆԱՏՕ-ի սեփական մշտական ուժերը խիստ փոքրաթիվ են: Երբ Հյուսիսատլանտյան խորհրդում որևէ գործողության վերաբերյալ որոշում է կայացվում, Դաշինքի անդամները կամավոր հիմունքներով զինված ուժեր են տրամադրում՝ այն իրականացնելու համար: Առաքելությունն ավարտելուն պես, այդ ուժերը վերադառնում են իրենց երկրները:

Այդ գործողությունները համակարգում ու իրականացնում է ռազմական հրամանատարությունը, որը բաղկացած է շտաբից ու տարբեր անդամ-երկրներում տեղակայված հենակետերից:

ՆԱՏՕ-ի առօրյա գործունեությունը, քաղաքացիական ու ռազմական կառույցները և անվտանգության ապահովման նպատակով իրականացվող ներդրումային ծրագրերը ֆինանսավորվում են ընդհանուր բյուջեներից, որոնք գոյանում են անդամ-պետությունների կողմից կատարվող մուծումներից՝ ըստ նախապես սահմանված ծախսերի բաշխման բանաձևի:

. NATO 2010 - ARM